

## ՈՐՈՇՈՒՄ

9 մարտի, 2022 թվականի № 18-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՅՏԻ ՆԱԽԱԳԾԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 20-ի N 72-Ա որոշման 5-րդ կետը և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 6-րդ և 7-րդ կետերը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի և հանրային հեռարձակողների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո թ ո ղ ու մ է.

1. Հավանություն տալ Հանրային հեռարձակողի խորհրդի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի նախագծին՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

9 մարտի, 2022 թվականի  
ք. Երևան